DOI: 10.54503/1829-4324.2023.1-287

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻ

Ռաշիդ Ջասիմի Մախմուդյան

Հոդվածը ստացվել է՝ 27.01.23, ուղարկվել է գրախոսման՝ 03.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Ելնելով տնտեսության մեջ զբոսաշրջության տեսակարար կշռից, ՀՀ կառավարությունը այն սահմանել է որպես գերակա ոլորտ՝ ձգտելով բարձրացնել Հայաստանի զբոսաշրջության ճանաչելիությունը: Զբոսաշրջության մեջ առանձնակի կարևոր և պահանջված ուղղություններից է գյուղական զբոսաշրջությունը, որի առանձնահատկություններից մեկը գյուղական վայրերի կենսամակարդակի բարձրացումն է:

Սոցիալական առումով զբոսաշրջությունը տարբեր մեխանիզմներով նպաստում է գյուղական համայնքների զարգացմանը, տնտեսապես անբարենպաստ տարածաշրջանների աշխուժացմանը, համայնքների ենթակառուցվածքների զարգացմանը: Այս ամենի արդյունքում բարձրանում է բնակչության կենսամակարդակը և բարելավվում է ապրելակերպը, ինչով էլ պայմանավորված է **հոդվածի արդիականությանը:**

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել գյուղական զբոսաշրջության զարգացման համաշխարհային առաջավոր փորձի 4 մոդելները (անգլոամերիկյան, արևմտաեվրոպական, ասիական, արևելաեվրոպական) և առաջարկել այն դարձնել որպես ՀՀ գյուղական զբոսաշրջության զարգացման համեմատական առավելություն ունեցող ուղղություն:

Նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել զբոսաշրջության միջազգային փորձը,
2. Վերլուծել Հայաստանում զբոսաշրջության առանձնահատկությունները,
3. Դիտարկել Հայաստանում զբոսաշրջության միջազգային փորձի ներդրման հնարավորությունները:

Գրականության վերլուծություն: Տարբեր կազմակերպություններ, գիտական դպրոցներ և անհատ փորձագետներ «գյուղական զբոսաշրջությունը» մեկնաբանում են տարբեր ձևերով:

Ըստ Քլոսի գյուղական զբոսաշրջությունը հասկացություն է, որն իր մեջ ներառում է այն զբոսաշրջության գործունեությունները, որն իրականացվում է գյուղական միջավայրում[1]:

Մեկ այլ տեսաբան Մ. Բիրժակովի աշխատության մեջ գյուղական զբոսաշրջությունը մեկնաբանվում է որպես առանձին զբոսաշրջիկների գյուղական արձակուրդ՝ կազմակերպված տուրոպերատորների և զբոսաշրջիկների միջև[2]:

---

[1] Department for food and rural affairs. Tourism statistic

[2] Биржаков М.Б. Исторические предпосылки деревенского туризма./ М.Б. Биржаков. О.А. Новикова // Туристические фирмы. 2002. № 28. С. 13-15:

Գյուղական զբոսաշրջությունը ընտանեկան բիզնես է, որտեղ ընտանիքում ապրող բոլոր անդամների համակարգված աշխատանքից է կախված բիզնեսի հաջողությունը[1]:

Գրականության մեջ գյուղական զբոսաշրջությունը որպես տնտեսագիտական եզրույթ մեկնաբանվում է հայեցակարգային և տեխնիկական բնութագրերի: Հայեցակարգային սահմանումները որոշարկում են զբոսաշրջության տեսական շրջանակը՝ դրա հիմնական բնութագրերը որոշելու համար, ինչը թույլ է տալիս տարբերակել զբոսաշրջությունը և հարակից այլ հասկացությունները:

Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից այլ վայր մեկնող քաղաքացիների գործունեությունն է[2]:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային պրակտիկան, գյուղական զբոսաշրջությունը հիմնականում նախատեսված է տվյալ երկրի ներքին զբոսաշրջային հոսքերը խթանելու համար, միայն զարգացման որոշակի փուլում գյուղատնտեսական տուրիզմը գրավիչ է դառնում օտարերկրացիների համար: Աշխարհի շատ երկրներում գյուղատնտեսական զբոսաշրջությունը դարձել է զբոսաշրջության ոլորտի մի մեծ հատված, որը ինտեգրված զբոսաշրջային տուրարդյունք ստեղծելու համար գլխավորապես կենտրոնացած է գյուղի բնական, մշակութային, պատմական և այլ ռեսուրսների օգտագործման վրա: Գյուղատնտեսական զբոսաշրջության զարգացման նախապայմանն այն է, որ զբոսաշրջիկների համար նախատեսված կացարանները տեղակայվեն գյուղական վայրերում[3]:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածում արծարծվող հիմնահարցերը ավելի տեսանելի դարձնելու նպատակով կատարվել է համեմատական վերլուծություն, մասնավորապես ներկայացվել են գյուղական զբոսաշրջության զարգացման անգլոամերիկյան, արևմտաեվրոպական, ասիական, արևելաեվրոպական մոդելները:

Վերլուծություն: Աշխարհի բոլոր երկրներում, անկախ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, գյուղական վայրերը քաղաքների համեմատությամբ բնութագրվում են ավելի ցածր եկամուտներով և կյանքի որակով: Որը դառնում է գյուղից դեպի քաղաք բնակչության արտահոսքի հիմնական պատճառը[4]:

Արտերկրի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության զարգացումը և մասնավորապես

---

[1] Ոսկանյան Ա., Գյուղական զբոսաշրջություն, Եր.: 2015, էջ 9

[2] ՀՀ օրենք «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին

[3] Ajdarhanova G.S. Agrojekologija: Uchebnik / G.S. Ajdarhanova, M.B. Husainov, A.T. Husainov. - Kokshetau, 2015.-191 s.

[4] Камбарова Е.А., Кулебякина О.А. проблемы устойчивого развития сельских территорий краснодарского края и перспективы развития агротуризма. курортно-рекреационный комплекс в системе регионального развития: инновационные подходы 1 2013 с 145-150.

ագրոտուրիզմը օգնում է նվազեցնել սոցիալական լարվածությունը գյուղական վայրերում՝ ստեղծելով նոր այլընտրանքային աշխատատեղեր և զարգացնելով գյուղական վայրերը:

Եվրոպական երկրներում ձևավորվել են զարգացման ուղղություններ, որոշվել է ագրոտուրիզմի մասնագիտացումը: Օրինակ, Իսպանիայում, Ֆրանսիայում և Իտալիայում գյուղում տուն վարձելը նախընտրում են նրանք, ովքեր հետաքրքրված են ազգային խոհանոցի յուրահատկություններով և ավանդույթներով և որոշել են իմանալ գինեգործների տեղական գաղտնիքները:

Բացի այդ զբոսաշրջության զարգացումը հանգեցնում է ենթակառուցվածքների բարելավմանը, պատմամշակութային հուշարձանների վերականգնմանը, շրջակա միջավայրի պահպանմանը և այլն: Ուստի զբոսաշրջության ոլորտը պետք է դիտարկել որպես գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր գործոն[1]:

Ֆինլանդիայում շեշտը դրվում է բացօթյա գործունեության, ձկնորսության, տարբեր հեծանվային զբոսանքների վրա գետերի և լճերի ափերին: Սլովակիայում, Հունգարիայում և Լեհաստանում ագրոզբոսաշրջությունը նախատեսված է այն զբոսաշրջիկների համար, ովքեր ցանկանում են ավելի լավ ճանաչել տեղական սովորույթներն ու մշակույթը, ինչպես նաև այցելել տարբեր բնական տեսարժան վայրեր, ինչպիսիք են մեծ լճերը կամ ազգային պարկերը[2]:

Ագրոտուրիզմի գլխավոր զբոսաշրջային ռեսուրսը հանդիսանում է հողը, ընտանի կենդանիները, գյուղատնտեսական ռեսուրսները և գյուղական բնակավայրերը[3]:

Ագրոտուրիզմը հնարավորություն է տալիս գյուղաբնակներին զարգացնել սեփական բիզնեսը: Անցկացնելով իրենց հանգիստը գյուղում զբոսաշրջիկները համտեսում են մաքուր և առողջ գյուղմթերք: Ստեղծելով ագրոտուրիզմի ակտիվ հոսք հնարավորություն է ստեղծվում ֆինանսական աղբյուրի շնորհիվ բարելավել գյուղացիական կյանքի որոշակի խնդիրներ:

Ագրոտուրիզմը ոչ միայն հանգիստ է, այլ նաև մշակույթի և պատմության արտահայտման ձև: Ագրոտուրիզմը համեմատած այլ հանգիստների ունի իր առանձնահատկությունները[4]՝

---

[1] Шумакова О.В., Блинов О.А., Рабканова М.А. Формирование агротуристического кластера как фактор повышения устойчивого развития сельских территорий // Вестник Алтайской науки. – 2013. - №2-2. – С. 192-196.

[2] Шумакова О.В., Блинов О.А., Рабканова М.А. Формирование агротуристического кластера как фактор повышения устойчивого развития сельских территорий // Вестник Алтайской науки. – 2013. - №2-2. – С. 192-196.

[3] Գրիգորյան Վ.Վ, Քելյան Ս.Ս., Հովհաննիսյան Ն.Ա արագածոտնի մարզի ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները եվ հեռանկարները. աշխարհագրության եվ երկրաբանության արդի հիմնախնդիրները Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100 -ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր Երևան, սեպտեմբերի 27-29, 2018թ.

[4] Մանուկյան Ա. Ագրոտուրիզմի զարգացման հեռանկարները Հայաստանում, Մարդ և հասարակություն Գիտամեթոդական վերլուծական ամսագիր № 1(63) 2016, էջ 36-37 https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mard%20ev%20hasarakutyun/2016(1).pdf

1. Ագրոտուրիզմը զբոսաշրջության առավել մատչելի ձևերից է: Ներկայումս Հայաստանում սահմանված գներով գյուղական բնակավայրերում հանգստի համար պահանջվում է 5-7 հազար դրամ՝ մարդ-օր հաշվով: Այնինչ սովորական հանգստյան տներում կպահանջվի մի քանի անգամ ավելի գումար: Ընտանեկան այցելության դեպքում գումարը կրճատվում է 35-40%:
2. Ագրոտուրիզմը, որպես կանոն, ընտանեկան տուրիզմ է, որը հնարավորություն է ընձեռում հատկապես երեխաների բարոյահոգեբանական և աշխատանքային դաստիարակության համար: Այն ստեղծում է նաև գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղական կենցաղին հաղորդակցվելու լավագույն հնարավորություններ:
3. Ագրոտուրիզմի զարգացումը խթանում է նաև գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում սոցիալական ենթակառուցվածքների, այդ թվում ճանապարհների, տրանսպորտի, կապի և այլ, և մշակույթի զարգացմանը:

Ագրոզբոսաշրջությունը այն հանգստի ձևերից է, որը թույլ է տալիս զբոսաշրջիկներին մասնակցել գյուղմթերքի պատրաստմանը և վայելել իրենց ձեռքերով պատրաստածը:

Գյուղական զբոսաշրջությունը պետք է լինի գյուղում տեղակայված, գյուղական կյանքի առանձնահատկությունների վրա հիմնված, փոքր կամ միջին բիզնեսը, գյուղական կյանքի տրամաբանության մեջ (շենքերը, սենյակները պետք է լինեն ոչ շատ մեծ և ոչ շատ ճոխ, սակայն հարմարավետ ու մաքուր), ապահովի բնության, մշակութային ժառանգության և ավանդույթների հետ շփումը, ուտելիքները պետք է լինեն օրգանիկ, ապահովված լինի պատմամշակութային արժեքների, հարմարավետության, տեղանքի և այլ ակտիվների բարձր որակով ու կատարյալ համադրությամբ: Զբոսաշրջության այս տեսակը հատկապես զարգացած է խոշոր քաղաքներում ապրող սպառողների շրջանում, քանի որ նրանք հատկապես մեծ պահանջարկ են ներկայացնում այն զբոսաշրջային ակտիվների նկատմամբ, որոնք ապահովում են հանգիստ, էկոլոգիապես մաքուր միջավայր, մաքուր օդ՝ կտրվելով առօրյա հոգսերից:

Գյուղական զբոսաշրջության շրջանակներում առաջարկվող ծառայությունները բազմաթիվ են, որոնցից են հարմարավետ գյուղական տնակներում, սենյակներում ապրելն ու հանգստանալը, բնության գրկում հանգիստը, էկոլոգիապես մաքուր, ազգային ճաշատեսակների և խմիչքների համտեսումը, տվյալ տարածքի պատմամշակութային վայրեր այցելությունը, զանազան արշավների մասնակցությունը, տվյալ վայրում ապրող մարդկանց ազգային, ժողովրդական ավանդույթներին ծանոթացումը, ձիավարության, ձկնորսության, որսորդության մասնակցությունը, բերքահավաքի ու գյուղատնտեսական այլ աշխատանքների մասնակցությունն ու գործնական փորձի ձեռքբերումը և այլն:

Գյուղական զբոսաշրջությունը տարբեր երկրներում ունի զարգացման ուրույն խթանները, սակայն այն հիմնականում ունի ստեղծման և զարգացման 3 պատճառ

- նոր շունչ հաղորդել զարգացման և աճի տեմպեր ապահովող գյուղատնտեսությանը,

- դիվերսիֆիկացնել գյուղատնտեսությունը՝ դարձնելով ավելի բազմաճյուղ,
- զարգացնել զբոսաշրջությունը՝ ներգրավելով այլ զբոսաշրջային ուղղություններ:

Աշխարհում կան գյուղական զբոսաշրջության կազմակերպման մի քանի մոդելներ՝ ըստ ազգային կոլորիտի: Հիմնականում առանձնացվում են չորսը՝ արևմտաեվրոպական, արևելաեվրոպական, ասիական և անգլո-ամերիկյան մոդելները: Վերջին երկու տասնամյակների ընթացքում տարբեր երկրներում գյուղական զբոսաշրջության այս կամ այն մոդելի հաջող ներդրումը հիմք է հանդիսացել զբոսաշրջության ոլորտի եկամտաբերության ավելացմանը[1]:

Անգլո-ամերիկյան մոդելը առաջացել է հետպատերազմյան շրջանում անգլախոս երկրներում (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա), երբ նրանց տնտեսությունը գտնվում ճգնաժամում և անհապաղ պետք էր քայլեր ձեռնարկել տնտեսության զարգացման համար: Այդ ընթացքում սկսվել էր ճանապարհների ակտիվ շինարարական աշխատանքներ, ինչն էլ մեծապես նպաստեց գյուղական տարածաշրջաններում տուրիզմի զարգացմանը: Հիմնական առանձնահատկություններից էր նաև այն է, որ զբոսաշրջիկների մեծ մասը ներքին շուկայից էր: Այսինքն՝ զարգանում էր ներգնա զբոսաշրջությունը:

Գյուղական զբոսաշրջության զարգացման հաջորդ՝ **Արևմտաեվրոպական** մոդելը առաջացել է 1970-ականներին, դրան համահունչ երկրներում գյուղատնտեսության զարգացման տեմպերի թուլացմանը զուգընթաց, որպես այլընտրանքային զարգացման ուղղություն: Մասնավորապես՝ Ֆրանսիայում և Իտալիայում, երբ սկսվեց գյուղական բնակչության զանգվածային արտագաղթը և դրա հետ մեկտեղ մեծանում էր պարենային անվտանգության խնդիրը: Այս մոդելի հաջողությունը կայանում էր պետության անմիջական աջակցությամբ, իրավանորմատիվային ակտերի ստեղծմամբ, ֆինանսական աջակցությամբ, մասնավորապես դոտացիաների, սուբսիդիաների, վարկերի տրամադրման տեսքով:

Հաջորդ՝ **Ասիական** մոդելը (Ճապոնիա, Թաիլանդ, Մալայզիա, Շրի Լանկա) հանդիսանում է անգլո-ամերիկյան մոդելի լրիվ հակառակ տեսակը: Այն առավելապես ունի հստակ ընդգծված ազգային կոլորիտ, իսկ զբոսաշրջիկները տեղաբաշխվում են հատուկ, այսպես կոչված՝ «VIP գյուղերում» կամ գյուղական բարձրորակ հյուրանոցներում: Այս մոդելն առավել կենսունակ է այն երկրներում, որտեղ ժողովրդական հյուրընկալության աստիճանը և զբոսաշրջության զարգացման մակարդակը բարձր է, ինչպես նաև առկա է պետական մեծ աջակցություն:

Արևելաեվրոպական մոդելի (հիմնականում՝ Հունաստան, Կիպրոս) ձևավորումն ու զարգացումը տեղի է ունեցել թույլ զարգացած ենթակառուցվածքների և ոչ այնքան բարձրորակ բնակֆոնդի առկայության պայմաններում, ինչը ենթադրում է ավտոճանապարհների, ենթակառուցվածքների ստեղծում կամ վերակառուցում, որը ծախսատար գործընթաց է[2]:

---

1 Искакова К.А., Актымбаева А.С., Жакупова А. А., Концептуальные подходы в организации сельского туризма (мировой опыт), "Вестник КазНУ" (серия географическая) №1/2 (42) 2016, стр. 296

[2] Նույն տեղում՝ էջ 297-298

Վերը նշված մոդելները թույլ են տալիս պնդելու, որ անգամ նշված մոդելներից մեկի տեղայնացման և կիրառման համար պետք է ոլորտի կարգավորմանը նպաստող որոշակի տնտեսական գործիքակազմեր, որոնցով հնարավոր կլինի զարգացնելով գյուղական բնակավայրերը նվազեցնել առկա գործազրկության մակարդակը:

Զբոսաշրջային այցելությունների տեսանկյունից վերջին տարիներին Հայաստանը բավական մեծ հաջողությունների է գրանցել: Ավանդական պատմամշակութային զբոսաշրջային ձևերից բացի, շատ օտարերկյա զբոսաշրջիկներ նախընտրում են մեր երկիր այցելել նաև գյուղատնտեսական տուրիզմի նպատակով: Արդեն մի քանի տարի է, ինչ ակտիվ հանգստի նպատակով զբոսաշրջիկները Հայաստան են այցելում ուսումնասիրելու մեր գյուղական համայնքները, վայելելու բնությունը և ծանոթանալու տեղաբնակների ապրելակերպին և ավանդույթներին:

Հայաստանը ունի աշխարհագրական բարենպաստ դիրք, գեղեցիկ լեռնաշխարհ, առատ բուսականություն, հայկական ավանդական խոհանոց և որը կարևորներից է՝ հյուրընկալ մարդկային գործոն:

Նշենք նաև, որ տուրիզմի այս ձևը մեծածավալ ներդրումներ չի պահանջում և որպես ներդրող հանդես է գալիս գյուղաբնակը: Կառուցելով կամ վերակառուցելով սեփական բնակատեղին, գյուղացին զբաղվում է փոքրիկ բիզնեսով և գիշերակացի ու նախաճաշի համար ստեղծված պայմաններով հնարավորություն ստեղծում գյուղ այցելած զբոսաշրջիկին կտրվել աղմկոտ քաղաքից և բանուկ այս հատվածում հանգստանալ:

Զբոսաշրջիկները ճանաչողական այցով հայտնվելով մեր երկրում հնարավորություն է ունենում շփվել նաև տեղական համայնքի հետ, ճաշակել ավանդական ազգային խոհանոցը, բայց ոչ թե ավանդական հյուրանոցային, այլ գյուղական պայմաններում:

Հայաստանն ագրոտուրիզմի ոլորտում ունի մեծ ձեռքբերումներ և բավական լուրջ հիմքերի վրա է դրված զբոսաշրջային տների ցանցի ձևավորումը: Գյուղական տուրիզմը այժմ ավելի շատ զարգացած է Դիլիջանում, Սևանում, Գորիսում, Տաթևում, շրջակա համայնքներում, Գյումրիում, Մեղրիում, Սիսիանում: Վերջերս շահագործման հանձնվեց նաև Հաղպատում նորակառույց մի հյուրանոցային տնտեսություն ևս, ինչը բնականաբար զբոսաշրջային այցելությունների նորհոսք կապահովի:

Ելնելով ոլորտում տեղի ունեցող զարգացման միտումներից կարծում ենք, որ ՀՀ-ի համար առավել ուսանելի և կիրառելի մոդել է արևելաեվրոպականը, քանի որ ՀՀ-ի և այս երկրների մեծ մասի տնտեսական պատմությունն առավել նման են, իսկ Կիպրոսի և Հունաստանի դեպքում էլ նման են հատկապես՝ ազգային մտածելակերպը, տնտեսությունների կառուցվածքը, բարեփոխումների ուղղությունները, տարածաշրջանային ինտեգրացիան և այլ հանգամանքներ: Սակայն նշվածը դեռևս չի նշանակում, որ մեզանում չպետք է ուսանելի լինեն նաև այլ մոդելները:

Օրինակ՝ ինչպես Արևմտաեվրոպական երկրներում 1950-70 ական թթ., այնպես էլ այժմ՝ մեզ մոտ լուրջ խնդիր է գյուղական համայնքների կայուն զարգա-

ցումը, այլապես արտագաղթի նման տեմպերի պահպանման դեպքում Հայաստանը, ցավոք սրտի, մոտ ապագայում լրջագույն ժողովրդագրական խնդիրների առաջ է կանգնելու, որոնք հատկապես ակնառու են լինելու գյուղական բնակավայրերում:

Գիտական նորույթը: Հոդվածում մշակվել և հիմնավորվել է գյուղական տուրիզմի զարգացման նպատակով կիրառելի ամենաարդյունավետ մոդելը՝(Արևմտաեվրոպական), որի կիրառումը կնպաստի դիտարկվող ոլորտի արդյունավետ զարգացմանը:

Եզրակացություն: Այսպիսով, կարող ենք ասել, որ գյուղական զբոսաշրջության հիմնական առավելությունը ՀՀ տնտեսության համար առաջին հերթին կայանում է ծառայությունների ոլորտում բնակչության զբաղվածության մակարդակի աճի ապահովումը, որը հնարավորություն կընձեռի նոր շունչ հաղորդել գյուղական կյանքին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հասարակ գյուղացին չի կարող բարվոք ապրել միայն անասնապահությամբ կամ հողագործությամբ զբաղվելով, իսկ գյուղում գտնել այլ աշխատանք շատ դժվար է, քանի որ աշխատատեղերը խիստ սահմանափակ են: Հետեւաբար՝ գյուղական զբոսաշրջությունը պետք է ՀՀ-ում դիտարկվի որպես տնտեսության զարգացման համար հեռանկարային ոլորտ, ինչը միանգամայն իրատեսական է, քանի որ 866 գյուղական համայնքներից շատերն ունեն զբոսաշրջիկներ ընդունելու բոլոր նախադրյալները: Այս առթիվ նշվում է համայնքահենք զբոսաշրջություն եզրը, որի էությունն է ներգրավել տեղի բնակչությանը զբոսաշրջային գործունեության մեջ՝ որպես աղքատության հաղթահարման կարևորագույն միջոց:

Մեր երկրի համար այս ոլորտում հատկապես կարևորվում է միջազգային փորձի ուսումնասիրությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը և ագրոտուրիզմի կառավարման արդիական համակարգի ներդրումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենք «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին
2. Գրիգորյան Վ.Վ, Քելյան Ս.Ս., Հովհաննիսյան Ն.Ա արագածոտնի մարզի ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները և հեռանկարները. Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100 -ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր Երևան, սեպտեմբերի 27-29, 2018թ.
3. Մանուկյան Ա. Ագրոտուրիզմի զարգացման հեռանկարները Հայաստանում, Մարդ և հասարակություն Գիտամեթոդական վերլուծական ամսագիր № 1(63) 2016 , էջ 33-41
4. Ոսկանյան Ա., Գյուղական զբոսաշրջություն, , Եր.: 2015, էջ 83
5. Биржаков М.Б. Исторические предпосылки деревенского туризма./ М.Б. Биржаков. О.А. Новикова // Туристические фирмы. 2002. № 28. С. 13-15:

6. Искакова К.А., Актымбаева А.С., Жакупова А. А., Концептуальные подходы в организации сельского туризма (мировой опыт), "Вестник КазНУ" (серия географическая) №1/2 (42) 2016, стр. 294-303
7. Камбарова Е.А., Кулебякина О.А. проблемы устойчивого развития сельских территорий краснодарского края и перспективы развития агротуризма. курортно-рекреационный комплекс в системе регионального развития: инновационные подходы 2013 с 145-150.
8. Шумакова О.В., Блинов О.А., Рабканова М.А. Формирование агротуристического кластера как фактор повышения устойчивого развития сельских территорий // Вестник Алтайской науки. – 2013. - №2-2. – С. 192-196.
9. Ajdarhanova G.S. Agrojekologija: Uchebnik / G.S. Ajdarhanova, M.B. Husainov, A.T. Husainov. - Kokshetau, 2015.-191 s.
10. Department for food and rural affairs. Tourism statistic

References

1. HH o'renq «Zbosashrjowt'yan & zbosashrjayin gorc'owneowt'yan masin», Y'ndownvac' e' 2003 t'vakani dektemberi 17-in
2. Grigoryan V.V, Qelyan S.S., Hovhannisyan N.A aragac'otni marzi agrotowrizmi zargacman hnaravorowt'yownnery' ev her'ankarnery'. ashxarhagrowt'yan ev erkrabanowt'yan ardi himnaxndirnery' Er&ani petakan hamalsarani himnadrman 100 - amyakin nvirvac' mijazgayin gitajhoghovi nyowt'er Er&an, septemberi 27-29, 2018t'.
3. Manowkyan A. Agrotowrizmi zargacman her'ankarnery' Hayastanowm, Mard & hasarakowt'yown Gitamet'odakan verlowc'a-kan amsagir № 1(63) 2016 , e'j 33-41
4. Oskanyan A., Gyowghakan zbosashrjowt'yown, , Er.:2015, e'j 83
5. Birzhakov M.B. Istoricheskie predposylki derevenskogo turizma./ M.B. Birzhakov. O.A. Novikova // Turisticheskie firmy. 2002. # 28. S. 13-15:
6. Iskakova K.A., Aktymbaeva A.S., Zhakupova A. A., Konceptual'nye podhody v organizacii sel'skogo turizma (mirovoj opyt), "Vestnik KazNU" (serija geograficheskaja) #1/2 (42) 2016, str. 294-303
7. Kambarova E.A., Kulebjakina O.A. problemy ustojchivogo razvitija sel'skih territorij krasnodarskogo kraja i perspektivy razvitija agroturizma. kurortno-rekreacionnyj kompleks v sisteme regional'nogo razvitija: innovacionnye podhody 2013 s 145-150.
8. Shumakova O.V., Blinov O.A., Rabkanova M.A. Formirovanie agroturisticheskogo klastera kak faktor povyshenija ustojchivogo razvitija sel'skih territorij // Vestnik Altajskoj nauki. – 2013. - #2-2. – S. 192-196.
9. Ajdarhanova G.S. Agrojekologija: Uchebnik / G.S. Ajdarhanova, M.B. Husainov, A.T. Husainov. - Kokshetau, 2015.-191 s.
10. Department for food and rural affairs. Tourism statistic

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻ

Ռաշիդ Ջասիմի Մախմուդյան

Համառոտագիր: Սույն հոդվածի **արդիականությունը** կայանում է ագրոտուրիզմի զարգացման միջոցով Հայաստանի գյուղական համայնքների համընթաց զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորությամբ:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել գյուղական զբոսաշրջության զարգացման համաշխարհային առաջավոր փորձի 4 մոդելները (անգլոամերիկյան, արևմտաեվրոպական, ասիական, արևելաեվրոպական) և առաջարկել դրա ՀՀ գյուղական զբոսաշրջության զարգացման համեմատական առավելություն ունեցող ուղղություն լինելը: Նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ **խնդիրները**. ուսումնասիրվել է զբոսաշրջության միջազգային փորձը, վերլուծվել է Հայաստանում զբոսաշրջության առանձնահատկությունները, ուսումնասիրվել է Հայաստանում զբոսաշրջության միջազգային փորձի ներդրման հնարավորությունները:

Հոդվածի համար **մեթոդաբանական** հիմք է հանդիսացել համեմատական վերլուծության մեթոդը:

Գիտական նորույթը: Հոդվածում մշակվել և հիմնավորվել է գյուղական տուրիզմի զարգացման նպատակով կիրառելի ամենաարդյունավետ մոդելը՝ (Արևմտաեվրոպական), որի կիրառումը կնպաստի դիտարկվող ոլորտի արդյունավետ զարգացմանը:

Գյուղական տուրիզմի մոդելի ընտրությունը **հնարավորություն** կտա ավելի կոնկրետացնել գյուղական տուրիզմի զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները: Դրանով իսկ հնարավորություն կստեղծվի զարգացնել նաև զբոսաշրջության ոլորտն աջակցող այլ ենթակառուցվածքները:

Բանալի բառեր. ագրոտուրիզմ, գյուղատնտեսական գործունեության զարգացում, ագրոտուրիզմի մասնագիտացում, զբոսաշրջային ռեսուրս, զբոսաշրջության զարգացման մոդելներ

АГРОТУРИЗМ КАК СПОСОБ РЕШЕНИЯ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ ПРОБЛЕМ ФЕРМЕРСКИХ ХОЗЯЙСТВ

Рашид Джасимович Махмудян

Аннотация. Актуальность данной статьи заключается в важности параллельного развития сельских общин Армении и повышения уровня жизни населения за счет развития агротуризма.

Цель статьи. Изучить 4 модели передового мирового опыта развития сельского туризма (англо-американскую, западноевропейскую, азиатскую, восточноевропейскую) и предложить направление, обладающее сравнительным преимуществом в развитии сельского туризма в Армении. Для достижения цели были решены следующие задачи: изучен международный опыт туризма, проанализированы особенности туризма в Армении, изучены возможности внедрения международного опыта туризма в Армении.

Методологической основой статьи послужил метод сравнительного анализа.

Научная новизна. В статье разработана и обоснована наиболее эффективная модель, применимая для развития сельского туризма (западноевропейская), применение которой будет способствовать эффективному развитию рассматриваемой отрасли.

Выбор модели сельского туризма позволит уточнить направления развития сельского туризма с учетом местных особенностей. Это создаст возможность для развития других инфраструктур, поддерживающих туристический сектор.

Ключевые слова: агротуризм, развитие сельскохозяйственной деятельности, специализация агротуризма, туристический ресурс, модели развития туризма.

AGRO-TOURISM AS A WAY OF SOLUTION OF SOCIAL-ECONOMIC PROBLEMS OF RURAL HOUSEHOLDS

Rashid Jasim Makhmudyan

Summary. The relevance of this article lies in the importance of simultaneous development of rural households of Armenia and raising the standard of living of the population through the development of agro-tourism.

The purpose of the article is to study the 4 models of the world's leading experience in the development of rural tourism (Anglo-American, Western European, Asian, and Eastern European) and propose agro-tourism as a direction with a comparative advantage in the development of rural tourism in Armenia. To achieve that goal, the following problems were solved: the international experience of tourism was studied, the peculiarities of tourism in Armenia were analyzed, and the possibilities of

introducing the international experience of tourism in Armenia were studied. The methodological basis for the article was the method of comparative analysis.

Scientific novelty. In the article, the most effective model applicable for the development of rural tourism (Western European) was developed and justified, the application of which will contribute to the effective development of the discussed sector. The choice of model will make it possible to specify the directions of rural tourism development, taking into account local characteristics. This will create an opportunity to develop other infrastructures supporting the tourism sector as well.

Keywords: agro-tourism, development of agricultural activities, agro-tourism specialization, tourism resources, tourism development models